РОССИЙСКО-АРМЯНСКИЙ (СЛАВЯНСКИЙ) УНИВЕРСИТЕТ

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ МЕДИЦИНСКИЙ УНИВЕРСИТЕТ ИМ. М. ГЕРАЦИ

# ԿԵՆՍԱԲԺՇԿՈՒԹՅԱՆ ԲԱՐՈՅԱ-ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

*Հանրապետական գիտաժողով*

*Республиканская научная конференция*

# ЭТИКО-ПРАВОВЫЕ ПРОБЛЕМЫ БИОМЕДИЦИНЫ

*21 ապրիլ, 2016, Երևան*

*21 апреля, 2016, Ереван*

# ԲԻՈԷԹԻԿԱԿԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐ՝ ՄԱՐԴՈՒ ԱՐԺԱՆԱՊԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

# БИОЭТИЮЕСКИЕ ПРОБЛЕМЫ: ДОСТОИНСТВО И ПРАВА ЧЕЛОВЕКА

**Դավթյան Սուսաննա**

ԵՊԲՀ Հասարակագիտական ամբիոնի դոցենտ

UNESCO-ի Բիոէթիկայի ամբիոնի հայկական մասնաճյուղ, վարիչ

**Давтян Сусанна**

ЕрГМУ, кафедра Общественных наук, доцент

Армянское подразделение кафедры Биоэтики ЮНЕСКО, заведующая









Անարձագանք թողնելով Ադրբեջանի կողմից ագրեսիայի, ահաբեկչական գործողությունների, վանդալիզմի դրսևորումը, չդիտարկելով այն որպես ոչ թե մեկ ազգի, այլ համայն մարդկության դեմ կատարված հանցագործություն, չդատապարտելով այն, քաղաքակիրթ աշխարհը առիթ է տալու հետագայում նման անթույլատրելի արարքների կրկնության և ստորացնելու է մարդկության բանական ու բարոյական մասի միջազգային հարաբերությունների դերն ու նշանակությունը:
Գիտաժողովի մասնակիցները դատապարտում են ցանկացած ահաբեկչական գործողություն, այդ թվում՝ 2016 թ. ապրիլի 2-6 իրականացված և իրականացվող սադրիչ, ահաբեկչական գործողությունները, որ ուղղված են Արցախի ինքնորոշման իրավունքի դեմ, ոտնահարում են մարդու ապրելու իրավունքը, անձեռնմխելիությունը, մարդկային արժանապատվությունը:




Փաստերը վկայում են, ցավոք, որ Հովհաննես Թումանյանը սխալվել էր, կարծելով, որ «բերանն արնոտ մարդակերը էն անբան հազար տարում հազիվ դառավ մարդասպան»:

Ավաղ, խաղաղ բնակչության, երեխաների, ծերերի, կանանց նկատմամբ իրականացված բռնությունները, խոշտանգումները, վանդալիզմը ստիպում են եզրակացնել, որ հակառակորդը մնացել է մարդակերի մակարդակում և դեռևս մարդասպան չէ և իր կատարածը կապ չունի քաղաքակիրթ աշխարհի ո՛չ իրավական, ո՛չ բարոյական գործող նորմերի հետ:

Եվ քանի որ մարդու իրավունքների և արժանապատվության մասին է այսօրվա մեր կոնֆերանսը, հետևաբար արդար կլինի միջազգային իրավունքի նորմերով պատժել մարդու արժանապատվությունն ու իրավունքները ոտնահարող բոլոր հանցագործներին:

Բիոէթիկայի գոյության առաջին 50 տարիների ընթացքում ՅՈՒՆԵՍԿՕ-ի բիոէթիկայի ամբիոնը և նրան ենթակա ազգային մասնաճյուղերի վարիչները քննարկում էին նրա ծագման, զարգացման հայեցակարգերը, մոտեցումները: Այդ օրիգինալ օգտաշատ գաղափարը կամաց-կամաց ձևավորեց իր ուղղությունները և հետևորդները: Այսօր մենք երկրորդ էտապում ենք: Այժմ դեմ առ դեմ կանգնած ենք մեկ ուրիշ խնդիրների առջև, խնդիրներ, որոնք թվում է, թե ավելի կարևոր, ավելի էական, դժվար լուծելի են, քան առաջին էտապի խնդիրները, ձգտումները՝ ներարկել մարդկանց կյանքի և առօրյա վարքագծի մեջ բարոյական արժեքներ, ներշնչել մարդկանց ունենալու այդ բարոյական արժեքները իրենց հոգում, վարքագծում, առօրյա կենսագործունեության մեջ:

Մեր այս նպատակները կամ խնդիրները կարող է և պետք է իրագործվեն երկու տարբեր միջոցներով. կրթական և իրավական:

Առաջին՝ կրթական ուղին պետք է ներառի դասավանդման նոր, թարմ մեթոդների օգտագործում, որը պետք է հնարավորություն տա մեզ թափանցել պոտենցիալ սպառողների գիտակցության, ուղեղի, մտքի և հոգու մեջ: Ովքեր են ուսանողները, առողջապահության աշխատակիցները, հիվանդները և ընդհանրապես հասարակության ամենալայն խավերը: Այսօր միայն վերբալ ճանապարհով դասախոսություն կարդալը պարզապես անթույլատրելի պետք է համարել, քանի որ շատ ավելի արդյունավետ է բիոէթիկական հիմնահարցերը տեղ հասցնել տարբեր «դերային խաղերի», իրադրության վերլուծությունների (case study), էքսպերտ խմբերի, բանավեճերի, համապատասխան ֆիլմերի և ներկայացումների դիտումով ու քննարկումով (մի բան, որ մենք կիրառել ենք մեր մանկավարժական գործունեության առաջին իսկ տարիներից):










ՅՈՒՆԵՍԿՕ-ի Բիոէթիկայի ամբիոնի հայկական մասնաճյուղի ջանքերով հրատարակվել է բիոէթիկայի 3 դասագիրք՝ հայերեն, ռուսերեն, անգլերեն լեզուներով, 1 մենագրություն հայերեն լեզվով և ավելի քան 35 հոդված ռուսերեն և անգլերեն լեզուներով, որից 21-ը՝արտասահմանում:



# Universal Declaration on Bioethics and Human Rights

## *Foreword*

In October 2005, the General Conference of UNESCO adopted by acclamation the Universal Declaration on Bioethics and Human Rights. For the first time in the history of bioethics, Member States committed themselves and the international community to respect and apply the fundamental principles of bioethics set forth within a single text.

In dealing with ethical issues raised by medicine, life sciences and associated technologies as applied to human beings, the Declaration, as reflected in its title, anchors the principles it endorses in the rules that govern respect for human dignity, human rights and fundamental freedoms. By enshrining bioethics in international human rights and by ensuring respect for the life of human beings, the Declaration recognizes the interrelation between ethics and human rights in the specific field of bioethics.

Together with the Declaration, the General Conference of UNESCO adopted a resolution which calls upon Member States to make every effort to give effect to the principles set out in the Declaration and invites me to take appropriate steps to ensure the follow-up to the Declaration, including its widest possible dissemination.

This brochure constitutes a first tool for the dissemination of the Declaration and is aimed at contributing significantly to knowledge of the Declaration worldwide and to understanding of the principles set out therein, so that human beings everywhere can benefit from the advances of science and technology within the framework of respect for human rights and fundamental freedoms.

*Koïchiro Matsuura*

# MEMORANDUM OF UNDERSTANDING

This Agreemant in entered into, on the 7th February 2011 by and between:

1. **UNITED NATIONS EDUCATIONAL SCIENTIFIC, AND CULTURAL ORGANIZATION, AN INTERNATIONAL ORGANIZATION**

**AND**

2. **STATE EDUCATIONAL INSTITUTION OF HIGHER PROFESSIONAL LEARNING “YEREVAN STATE MEDICAL UNIVERSITY AFTER M. HERATSI”**

On 23 November, 2010 a Memorandum was signed on behalf of the Director-General of UNESCO Director of the UNESCO Moscow office Dendev Badarch and on behalf of Yerevan State Medical University after M. Heratsi consultant Susanna Davtyan.

Signed on behalf of the Director-General of UNESCO

Name: Mr. Dendev Badarch    Date: 23.11.10

Title: Director of the UNESCO Moscow Office    Signature: [signature]

Consultant [Please sign and return a copy to UNESCO. Retain the original]:

Name: Ms Susanna Davtyan    Date: 23.XI.2010

Title: Professor of the Yerevan State Medical University    Signature: [signature]

Բիոէթիկայի վերաբերյալ գրականության մեջ մարդու արժանապատվության և իրավունքների մասին խոսելիս նկատի են առնվում երկու ասպեկտ.

1. մարդն ունի աշխատելու, սովորելու և այլ իրավունքներ, և այդ թվում՝ առաջնային հիմնարար իրավունքը նրա ապրելու իրավունքն է, մարդու կյանքը սրբագործված է՝ սակրալ, անձեռնմխելի է, որն ամրագրված է նաև շատ երկրների, այդ թվում ՀՀ-ի Սահմանադրության մեջ և այս դրույթի անտեսումը, ոտնահարումը դիտվում է որպես մարդու իրավունքի ոտնահարում,
2. մարդու կյանքի հետ գործ ունեցող մասնագետի՝ բժշկի իրավունքը՝ խախտելու մարդու, տվյալ դեպքում հիվանդի կյանքի սակրալ, սրբագործված, անձեռնմխելի լինելու կյանքի իրավունքը: Այսինքն՝ իրավունք ունի արդյո՞ք բժիշկը խախտելու մարդու կյանքի իրավունքը, նրա կյանքի անձեռնմխելիությունը, թեկուզ հենվելով հիվանդի գրավոր կամ բանավոր համաձայնության վրա:

Ընդ որում՝ մարդու կյանքի իրավունքի ոտնահարումը ևս պետք է դիտարկել երկու ասպեկտով.

ա) կյանքի իրավունքի խախտում տվյալ հիվանդի ցանկությամբ (Գ. Գևորգյան),

բ) մարդու կյանքի իրավունքի ոտնահարում առանց նրա կամքի դրսևորման:



Մարդու իրավունքները ընկալվում են որպես անբաժան, հիմնարար իրավունքներ, որոնք ի ծնե ունի յուրաքանչյուր մարդ այն պարզ պատճառով, որ նա մարդ

Այս իրավունքները (խոսքի ազատության իրավունքը, կյանքի իրավունքը, կտտանքների չենթարկվելու իրավունքը, ինքնորոշման իրավունքը և այլն) գործում են անկախ մարդու տարիքից, սեռից, ծագումից, ազգությունից, համոզմունքից և այլն

Սովորաբար մարդու իրավունքները բաժանվում են 3 տեսակի՝

ա) քաղաքական և քաղաքացիական իրավունքներ՝ կրոնի, համոզմունքի իրավունքը, խոսքի ազատության իրավունքը և այլն,

բ) մշակութային, սոցիալական, տնտեսական իրավունքներ՝ աշխատանքի, կրթության, սննդի, ապաստանի և այլն:

գ) հավաքական իրավունքներ, որոնք սկսել են ամրագրվել 1970-ականների ապագաղութացման շրջանում, երբ Աֆրիկայի ու Ասիայի շատ գաղութներ պահանջեցին ինքնորոշման, իրենց բնական ռեսուրսների տնօրինման իրավունքներ:

Վերոնշյալ բոլոր իրավունքները ամրագրվել են ՄԱԿ-ի Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի մեջ 1948 թ.:





1941 թ. Ֆրանկլին Ռուզվելտը իր՝ «Երկրի իրավիճակի մասին» ելույթում կոչ արեց պահպանել չորս անհրաժեշտ ազատությունները, որոնք են՝ ազատություն վախից, ազատություն կարիքներից, խոսքի ազատություն և խղճի ազատություն: Սա նոր խթան հանդիսացավ մարդու իրավունքների՝ որպես խաղաղության և պատերազմի ավարտի պայմանի զարգացման համար:

Երբ հասարակությանը հայտնի դարձան վայրագությունները, որոնք իրականացնում էր նացիստական Գերմանիան, պարզ դարձավ, որ ՄԱԿ-ի կանոնադրությունը բավարար ճշգրիտ չի սահմանում մարդու իրավունքները: Անհրաժեշտ եղավ ստեղծել համընդհանուր պայմանագիր, որը կթվարկեր և կնկարագրեր անհատի բոլոր իրավունքները. «Կառավարություններն իրենց և իրենց ժողովուրդների վրա մեծ պատասխանատվություն են դնում, ինչն ապահովում է հռչակագրում նշված մարդու իրավունքների համընդհանուր և արդյունավետ ճանաչումն ու պահպանումը»:









Սակայն իսլամական երկրները (Սուդան, Պակիստան, Իրան, Սաուդիան Արաբիա, ՄԱԷ, Քաթար) քննադատել են Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը, նշելով, որ իրենց կառավարությունները հիմնված են Շարիաթի վրա.

«Հրեա-քրիստոնեական ավանդույթների աշխարհիկ փոխըմբռնումն է դա», ինչը չի կարող իրականացվել մուսուլմանների կողմից՝ առանց խախտելու իսլամական օրենքը:

Իսլամական Համագործակցության Կազմակերպությունը, իսլամական ազգերը որպես այլընտրանքային փաստաթուղթ որոշեցին պաշտոնապես պաշտպանել **«Կաիիրեի հռչակագիրը մարդու իրավունքների մասին իսլամում»** (որն ընդունվեց 1998 թ. օգոստոսի 5-ին), որն ասում է, որ մարդիկ ունեն արժանապատիվ կյանքի և ազատության իրավունք… համաձայն իսլամական Շարիաթի:





Չնայած Մարդու իրավունքների Կաիիրեի հռչակագրի առկայությանը, իսլամական երկրներում այսօր հաճախ են անտեսվում դրանով սահմանված սկզբունքները: Դրանք խախտվում են անգամ իսլամական սկզբունքների վրա խարսխված երկրներում, ինչպիսին է Սաուդյան Արաբիան, մի երկիր, որը հրաժարվեց 1948թ.-ին միանալ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրին:










First Announcement and Call for Abstracts
UNESCO CHAIR IN BIOETHICS
International Conference
on
Bioethics Committees in Hospitals
Canaan Spa
Zefat, Israel
May 17-20, 2009
Under the auspices of:
• UNESCO Chair in Bioethics
• UNESCO Commission of Israel
• The International Center for Health, Law and Ethics
• Faculty of Law, University of Haifa
• Zefat Academic College, Israel
UNESCO
ISRAEL NATIONAL COMMISSION FOR UNESCO
www.isas.co.il/bioethics2009


Universal Declaration
on Bioethics
and Human Rights


UNESCO
United Nations
Educational, Scientific
and Cultural Organization
Forum for Ethics Committees
in the Commonwealth
of Independent States
THE CURRENT STATE OF BIOETHICS
EDUCATION IN THE SYSTEM OF MEDICAL
EDUCATION IN THE CIS MEMBER COUNTRIES
ANALYTICAL REVIEW


ETHICS AND TECHNOLOGY
THIRD EDITION


070-1586
BIOETHICS
Федеральный
научно-
практический
журнал
2/2013

1947 թ. Նյուրնբերգյան ռազմական տրիբունալը բացահայտեց մի պարզ բան, թե ինչքան անհուսալի են, փխրուն ու թույլ բոլոր էթիկական և իրավական արգելքները, որոնք իբր կոչված են պաշտպանելու մարդկանց կյանքը գիտության նվաճումների ի վնաս մարդու հավանական կիրառումից: Հիպոկրատեսի երդումը բոլորովին էլ արգելք չհանդիսացավ նացիստական բժիշկների համար, երբ անցկացնում էին փորձարկումներ դատապարտյալների մասնակցությամբ: Նյուրնբերգյան կոդեքսի սկզբունքային պահանջներից մեկն էլ դարձավ այն, որ արգելվեց առանց մարդու ինքնակամ գրավոր համաձայնության դարձնել նրան գիտափորձերի, փորձարկումների առարկա կամ մասնակից:






Մարդկության գլխին այսօր կախված է նաև բիոտերրորիզմի վտանգը, որի գործիք կարող են լինել գենետիկորեն փոփոխված բակտերիաները, որոնք կայուն են դեղորայքի ազդեցության նկատմամբ, նաև պրեպարատներ, որոնք կարող են ջնջել մարդու հիշողությունը: Անհանգստություն է պատճառում ոչ միայն այն, թե ինչ կարող են մեզ հետ անել այլ մարդիկ, այլ նաև այն, թե ինչ մենք ինքներս մեզ հետ կարող ենք անել:

Գիտական բժշկության մեջ բիոէթիկայի հումանիստական գաղափարների ներդրման նպատակն է գիտնականների մոտ արթնացնել «մասնագետի խիղճը», խիղճ, որ ետ կպահի իրենց գենային ինժեներիայի մեթոդներով կենդանիների և բույսերի նոր տեսակների և առավել ևս ու առաջին հերթին կլոնավորման մեթոդներով մարդ ստեղծելու անհեռատես փորձերից:

Եթե հասարակական գիտակցության մեջ ամրապնդվեն բիոէթիկայի հումանիստական գաղափարները, ապա դա թույլ կտա լուծել բարդ հարցերի մի հսկայական կծիկ, որ առաջանում է «մեղքով»: Գիտնականներ, որոնք երբեմն բարոյական տեսակետից խիստ կասկածելի գործողություններով մարդկային քաղաքակրթությունը կանգնեցնում են անդունդի եզրին, ավելին, հանգեցնում են մարդկության հնարավոր ոչնչացմանն ու վերացմանը: Ահա թե ինչու է այդքան կարևոր ու անհրաժեշտ ձևավորել բժիշկ գիտնականների բարոյափիլիսոփայական ինքնագիտակցությունը:







«Իմ
կուսակցությունը
իմ երկիրն է»


Njdeh


Monte


Hay Zinvor